

ումանք, կ'ըսէ, հին սովորութեան մ'ազդեցութեամբ՝ կը շարունակէին դեռ իւր օրով «ինքնակամ կամօք» ուտել ձուկ, ձէթ ու գինի. նման ժամանակի Յունաց ու Փրանկաց սովորութեան. մինչդեռ բուլոր եկեղեցականք եւ «բազումք ի ժողովրդոց» ի սպառ կը հրաժարէին «ի կթեղէն կերակրոց եւ ի ձկանց... այլ եւ յամենայն պարարտ կերակրոց եւ յըմպելեաց գինւոյ». եւ անսաստողք խոստովանելով՝ «ճանրագոյն» ապաշխարութեան կ'ենթարկուէին (Բնդհ. 63):

Գ. Ծոմն եթէ կամաւոր էր սովորական կամ ինքնակամ պահոց մէջ, պարտաւորիչ էր ազուհացից համար՝ ըստ ընդհանուր եւ հնաւանդ սովորութեան: Այն ժամանակ՝ երբ զատկական պահքը վեց օր միայն էր, ըստ «Վարդապ. Առաքելոց՝» առաջին չորս օրերու ծոմը կը լուծուէր «իններորդ ժամուն՝ ազով եւ հացով». իսկ ուրբաթ եւ շաբաթ համակ ծոմ կը պահուէր (Կարբ. Բ, 2140): Ըստ «Սահմանադր. Առաքելոց՝» չորս օրերու ծոմը կը տեւէր «մինչեւ երեկոյ», ուր կ'ուտէին «հաց, աղ, ընդեղէն եւ ջուր». եւ երկու օրերն անսուաղ կ'անցնէին մինչեւ կիւրակէի հաւախօսը: Իսկ երբ պահքս քառասնօրեայ եղաւ, կ'երեւին երկու՝ եւ